ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՏԴ 005.334

Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Անդրադարձ է կատարվել «ռիսկ» հասկացությանը, նրա գնահատմանը, որպես անցանկալի հետևանք՝ նրա վտանգավորությանը, որին հետ բախվում է ցանկացած պետություն կառավարման, բիզնես գործունեության, ներդրումների և այլ կարևոր գործընթացների ժամանակ: Վերլուծության են ենթարկվել նաև ճգնաժամային տեխնոլոգիաները, ինչը հատկապես կարևոր է ՀՀ տնտեսական զարգացման համատեքստում:

Առանցքային բառեր. քաղաքական ռիսկ, ռիսկի գնահատում, անցանկալի հետևանք, ճգնաժամային տեխնոլոգիաներ, ռիսկի մակարդակ:

«Ռիսկ» հասկացությունը՝ որպես առօրյա գործածության տերմին, առաջացել է դեռևս միջնադարի վերջնամասի և նոր ժամանակների սահմանագծին: «Ռիսկ» եզրույթի առաջացումը մեծապես պայմանավորված է գործընթացների աշխարհականացման, աշխարհի նկատմամբ իրատեսական հարաբերությունների և որոշումների ընդունման նկատմամբ պատասխանատվության ձևավորմամբ: 19-րդ դարում այն խոր վերլուծության նյութ էր տնտեսական իրավունքում, իսկ 20-րդ դարի սկզբում «ռիսկ» հասկացությունը իր տեղը գտավ նաև քաղաքական որոշումների ոլորտում: Քաղաքական ռիսկը համարվում է ռիսկի տարատեսակներից մեկը, որը հանրագիտարանային հասկացության կարգավիճակ է ստացել և դարձել միջառարկայական հետազոտությունների նյութ:

Աշխատանքում խնդիր է դրվել բացահայտել ռիսկերի կառավարման տեխնոլոգիաները, նրա էությունն ու գնահատման չափորոշիչները և ճգնաժամային տեխնոլոգիաները:

Հարկ է նշել, որ քաղաքական ռիսկը ընդունված որոշումների պարագայում անցանկալի հետևանքների հավանականությունն է, հատկապես, եթե դա վերաբերում է կարևորագույն քաղաքական որոշումներին, միջազգային բիզնեսին, երբ անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր մանրուքները՝ կապված քաղաքական, տնտեսական, սոցիալական խնդիրների հետ: Ընդունված է ասել, որ ռիսկը

մշտապես անբարենպաստ հետևանքների վտանգ է պարունակում: Սրանից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ռիսկի հաշվարկումը միտված է նախ և առաջ անցանկալի կորուստներից խուսափելուն, դժվարին խնդիրները հաղթահարելուն, եթե դեռևս պահպանվել են դրա հնարավորությունները: Նման դեպքերում, ինչպես նշում է Կ. Պոպպերը «Մենք չգիտենք, մենք միայն կարող ենք ենթադրել» [1]: Որոշումներ ընդունելիս ռիսկի հաշվարկումը առավելապես նպատակ ունի բարձրացնելու դրանց արդյունավետությունը, ինչպես նաև զարգացնելու քաղաքական համակարգի գործունեությունը:

Կարելի է տարբերակել ռիսկի երկու տեսակ՝ «մաքուր» և «գործնական»: Առաջինները բնորոշում են որոշակի կորստի հնարավորությունը՝ պայմանավորված ոչ ստանդարտ իրավիճակներով (հատկապես կապված մարդկային կորուստների հետ): Երկրորդը վերաբերում է այն իրավիճակին, երբ ցանկալի որոշումները չեն ապահովում սպասվող արդյունքը, և լինում են անցանկալի կորուստներ, մասնավորապես՝ ռեսուրսների կորուստ, կամ նրանց ստացումը սպասվող քանակից բավականին քիչ:

Ռիսկի մակարդակը իրավիճակի քանակական գնահատականն է (որն արտացոլում է ընդունվող որոշումների անորոշության աստիճանը), կորստի հաշվարկումը՝ պայմանավորված ընդունվող որոշումների հնարավոր անցանկալի հետևանքներով: Գործնականում, ռիսկի մակարդակը բնութագրում է նրա պատասխանատվության կամ անպասխանատվության աստիճանը, ով ընտրում է խնդիրների լուծման ուղղությունները:

Քաղաքական ռիսկի գնահատման արդյունավետ մեթոդ կարելի է համարել շրջակա բիզնես միջավայրի ինդեքսի (ցուցիչի) որոշակիացումը (Business Environmental Risk Index): Այս մեթոդը կրճատ անվանվում է BERI, ենթադրում է յուրաքանչյուր փաստարկի նշանակության արժևորվում քաղաքական ռիսկի գնահատման ժամանակ այն ենթադրում է քաղաքական ռիսկի յուրաքանչյուր գործոնի գնահատականի կարևորությունը և չորսբալային համակարգում այդ գործոնի գնահատումը փորձագետների կողմից, որտեղ պայանականորեն 4-ը ամենաբարձր բալն է, իսկ 0-ն՝ ամենացածրը: Բնականաբար, հասարակական-քաղաքական կյանքում կատարվող ցանկացած փոփոխություն ազդեցություն է գործում ռիսկի գնահատման վրա:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում քաղաքական ռիսկի գնահատման ժամանակ ուշադրություն է դարձվում այնպիսի երևույթների վրա, ինչպիսիք են քաղաքկան պլյուրալիզմը, կրոնական ու էթնիկական խմբերի փոխ-

հարաբերությունները, իշխանության վերին ատյաններում կոռուպցիայի մակարդակը, քաղաքական անկարգությունների հնարավորությունը, ներքաղաքական անկայունությունը և այլն:

Քաղաքական ռիսկը գնատվում է տարբեր մակարդակներով՝ գլոբալ, տարածաշրջանային, ազգային և այլն: Վերջին տարիներին մեծացել է հետաքրքրությունը հատկապես գլոբալ ռիսկի նկատմամբ: Դա նկատելի է հատկապես հաճախակի կազմակերպվող միջազգային կոնֆերանսների թեմաներից: Շատ հաճախ այն արտացոլվում է նաև արևմուտքի ազդեցիկ շրջանակների երկրների միջև «գլոբալ կոորդինացիա» ստեղծելու ձգտումներում: ՈՒժեղացել են նաև «վստահության համաշխարհային դաշտ» ստեղծելու միտումները, սակայն այստեղ առկա է վտանգը առ այն, թե ով կվերահսկի այդ դաշտը և ով կսահմանի այն խաղի կանոնները, որին պետք է ենթարկվեն մյուս երկրները: Այս միտումները հաշվի առնելով՝ կարելի է եզրահանգել, որ գլոբալ մակարդակում որքան աճի «կոորդինցիան» տնտեսական բնագավառում, այնքան գլոբալ մակարդակում կիջնի քաղաքական կազմակերպվածության մակարդակը՝ ի հաշիվ նախկին խոշոր տերությունների փլուզման հետևանքով առաջացած փոքր պետությունների, որոնք, որոնք չեն կարողանում «արևի տակ» գտնել իրենց տեղը: Նման իրավիճակներում, բնականաբար, քաղաքական ռիսկը մեծանում է:

Ազգային մակարդակում քաղաքական ռիսկը գնահատելիս սովորաբար օգտագործվում են համեմատական տվյալները, երբ երկրի ռիսկի մակարդակը բնութագրող քանակական գնահատականը ձևավորվում է համապատասխան ռեյտինգները: Երկրի ռեյթինգը նրա տեղն է համեմատվող երկրների ամբողջության մեջ, որն արտացոլում է ցանկալի իրավիճակի մակարդակը համապատասխան միջավայրում: Շատ հաճախ խոսվում է նաև «քաղաքական կլիմաների» տարբերությունների մասին: Դժվարությունն այն է, որ ռեյթինգը սովորաբար կապված է որոշակի թվով դիտարկվող երկրների հետ /նրանց թիվը հաստատուն չէ/:

Գործնականում երկրի ռեյթինգը որոշվում է երկրների որոշակի խմբում նրա գրաված տեղով՝ պայմանավորված քաղաքական ռիսկի գնահատման սանդղակում ստացած բալերով: Փորձագետները, ստանալով, յուրաքանչյուր երկրի գնահատականը, ընդհանրացնում են և որոշում յուրաքանչյուրի միջին ցուցանիշը: Յուրաքանչյուր ցուցչի նշանակությունը գնահատվում է հետևյալ աստիճանակարգով:

Քաղաքական ռիսկի գնահատման մակարդակը [2]

Մակարդակը	Բալերը	Կորուստների հավանականությունը
Գործնականում բացակ.	83-100	-
Շատ ցածր է	75-82	ցածր
Ցածր է	67-74	/ փոքր է/
Նկատելի է	60-66	-
Միջինից ցածր	55-59	չափավոր
	51-54	թույլատրելի
Միջին	45-50	-
Միջինից բարձր	40-44	մեծ է
Թույլատր. սահմանում	34-39	հզոր է
Անթույլատրելի է	26-33	-
	18-25	բարձր է
	0-17	

Գործնականում ոչ այնքան կարևոր է իմանալ տվյալ ցուցանիշների բացարձակ նշանակությունը, որքան նրանց փոփոխման միտումներն ու դինամիկան:

Ռիսկի գնահատման անհրաժեշտությունը հատկապես առաջանում է այն ժամանակ, երբ խնդիր է դրվում որոշելու, թե որտեղ է պետք իջեցնել անորոշության աստիճանը:

Քաղաքական ռիսկի գործակցի որոշակիցման համար ուշադրության են արժանի մի շարք գործոններ.

1. էթնիկական և կրոնական տարբերությունների աստիճանը,
2. սոցիալական անհավասարությունը և շահույթի բաժանումը,
3. քաղաքական պլյուրալիզմի (բազմակարծության) աստիճանը,
4. հակասահմանադրական գործողությունների մասշտաբները,
5. իրավական նորմերի խախտումները (չարտոնված միտինգ, հանրահավաք, երթ և այլն):

Հաշվի առնելով վերը թվարկած գործոնները, կարելի է փաստել, որ ՀՀ-ում առայժմ ռիսկի աստիճանը բարձր է և այն կարելի է բնութագրել որպես անցման շրջանի ռիսկ. ցանկացած անխոհեմ քայլ քաղաքական կյանքում կարող է անկանխատեսելի ավերիչ հետևանքներ ունենալ: Պետական քաղաքականության առաջնային տարրերը կապված են ռիսերի կանխարգելման հետ, որը սոցիալական գործընթացների ղեկավարման և կառավարման ունիվերսալ միջոց է: Ռիսկի դեմ պայքարի հատկանշական ռեզերվ կարելի է համարել նաև հասարակական

կարծիքում անխուսափելի ռիսկին նպատակամղված պարզաբանումը, բարենպաստ քայլերը՝ ուղղված այնպիսի ռացիոնալ հարաբերությունների նվազեցման, զանգվածային մոտիվացիայի հիմնահարցին, ինչպիսիք են վախը և սովը: Այս առումով կարևոր ռեզերվ է համարվում նաև որոշումների ինստիտուցիոնալացումը, սկզբունքների և նորմերի հեղինակության բարձրացումը, որոնք ունակ են հստակ կողմնորոշելու հասարակության գործունեությունը ճգնաժամային պահերին:

Ճգնաժամային տեխնոլոգիաներ: Հարկ է նշել, որ ռիսկերի մեծացումը և պետության համար ճգնաժամային իրավիճակի ստեղծումը ենթադրում են հատուկ տեխնոլոգիաների կիրառում պետական կառավարման նպատակների ձևավորման և իրականացման համար: Ճգնաժամային իրավիճակում պետական առաջնահերթ խնդիրները ենթարկվում են փոփոխության, քանի որ իրավիճակը պահանջում է կառավարման որակի փոփոխություն: Ըստ էության, ճգնաժամային իրավիճակներում պետական կառավարման մարմինները պահպանվում են հիմականում նախազգուշական բնույթի տեխնոլոգիաների կառուցման հաշվին: Գտնում ենք, որ նման իրավիճակում պետությունը ոչ միայն պետք է ձգտի համարժեքորեն արձագանքել բոլոր հնարավոր ճգնաժամերին, այլև պատրաստ լինի դրան: Այդ առումով կարևոր խնդիր է պետական ղեկավարման պահուստային համակարգի ձևավորումը, կադրերի պատրաստումը, տեխնիկական, ինֆորմացիոն և այլ կառուցվածքների կատարելագործումը, ինչը, անհրաժեշտության դեպքում հնարավորություն կստեղծի լիարժեքորեն փոխարինելու դրանք: Ճգնաժամային իրավիճակներում ղեկավար համակարգի նախազգուշական գործողությունները պետք է իրականացվեն իրավական քաղաքական մթնոլորտում, համապատասխան օրենքների ընդունման, ղեկավարության փակ և բաց որոշումների տեսքով, որոնք կարգավորում են այդ կառույցների գործունեությունը ճգնաժամային և բացառիկ իրավիճակներում[3]: Կարևոր նշանակություն ունի նաև պետության կանխարգելիչ գործունեությունը ինֆորմացիոն-կոմունիկացիոն ոլորտում, որը ենթադրում հետևողական սպեցիֆիկացիումը և նրանց շարժունակության գնահատումը որոշումների ընդունման տարբեր մակարդակներում:

Ճգնաժամային տեխնոլոգիաները հիմնականում ունեն անհատականացված բնույթ և ուղղորդված են դրանց որոշակի քաղաքական գործիքների կամ էլիտար խմբերի օգտագործմանը, որի հետևանքով աճում է դրանց կախվածությունը տեխնոլոգիաներն օգտագործող լիդերների ոճից, ղեկավարող էլիտայի

բնույթից, նրա բազմաթիվ սեգմենտների (հատվածների, մասերի) ակտիվությունից: Հակաճգնաժամային գործունեությունը, որպես կանոն, կախված է նրա և կոնտրագենտների (պայմանագրի կողմ. դրանք կարող են լինել կուսակցությունները, արտասահմանյան գործընկերները և այլն) հարաբերություններից, որոնց քայլերը կարող են նկատելիորեն սահմանափակել պետական գործունեության՝ ճգնաժամերը ղեկավարող միջոցները և մեթոդները: Օրինակ, որպես կանոն, ընդդիմությունը մշտապես դեմ է արտակարգ իրավիճակների հաստատման ու սահմանադրական ազատության սահմանափակմանը, ինչը նեղացնում է նրա՝ իշխանության վրա ազդելու հնարավորությունները: Այդ է պատճառը, որ շատ հաճախ նրա հակազդեցության ոչ համարժեք հաշվարկը կարող է հանգեցնել ճգնաժամի ոչ թե թուլացմանը, այլ ուժեղացմանը, ինչը, բնականաբար, կհանգեցնի ռիսկի աստիճանի բարձրացմանը: Օպերատիվ բնույթի ճգնաժամային տեխնոլոգիաների մշակման տրամաբանությունը ենթադրում է և՛ ճգնաժամի որոշում ռազմական, ֆինանսական, տնտեսական, սոցիալական ոլորտներում, և՛ նրա ինտենսիվության մակարդակի չափում, ինչը անխուսափելիորեն կկարգավորի ղեկավար համակարգի գործունեությունը: Հարկ է նշել, որ նման իրավիճակներում անխուսափելի է արտաքին միջավայրի ազդեցությունը, ինչը, բնականաբար առաջացնում է հակազդեցության որոշակի մակարդակ, և այն կարող է ազդել ղեկավար մարմինների մասնագիտական գործունեության վրա, նպաստել ծախսերի մեծացմանը, սպառնալ ղեկավար համակարգի, հասարակության և այլ միջազգային կազմակերպությունների կապերի ամրապնդմանը, որը հարցականի տակ կդնի ռեժիմի գոյությունը:

Պետության մեջ ճգնաժամային մենեջմենթը ենթադրում է տրանսֆորմացիաներ /ձևափոխություններ/, որոնք կապված են որոշումների ընդունման փուլերի ժամանակահատվածի կրճատման հետ. օրինակ, գործողության տեսակների դիտարկման և դրանց կանխատեսման փուլերի կրճատում, այլընտրանքի հնարավորություն, որը կապված է նպատակների ապահովման հնարավորությունների և ռեսուրսների հետ:

Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ռիսկը վերլուծելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ առանձնահատկությունների վրա.

- Քաղաքական ավանդույթներ, ժողովրդավարական ինստիտուտների անկատարություն: Պատմական զարգացման շրջադարձային պահերին անհատի դերակատարության բարձրացում:

▪ Մարզերի անհամաչափ զարգացում, դրանով պայմանավորված՝ սոցիալական վիճակների տարբերություն:

▪ Արցախյան գործոնի առկայություն, ինչը պահանջում է լրացուցիչ միջոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Поппер К.** Открытое общество и его враги.- М.., 1992. - Т.-1. 125 с.
2. Общая и прикладная политология: Учеб. пособие /Под общ.ред. **В.И. Жукова и Б.И. Краснова.** –М., 1997. - 87 с.
3. **Раченцоов Г.Г.** Коммуникативные технологии XX века.- М,, 1999. - 26 с.

Н.К. БАГДАСАРЯН

ОЦЕНКА ПОЛИТИЧЕСКОГО РИСКА И КРИЗИСНЫЕ ТЕХНОЛОГИИ

Затрагивается понятие «риска», его оценка как следствие опасности, с которой сталкиваются любая система дается государственного управления, бизнес и инвестиционный спектр. Также проанализированы кризисные технологии, имеющие особое значение для экономического развития Армении.

Ключевые слова: политический риск, оценка риска, неблагоприятные последствия, кризисные технологии, уровень риска.

N.K. BAGHDASARYAN

POLITICAL RISK ASSESSMENT AND CRISIS TECHNOLOGIES

The concept of “risk” is touched upon, its assessment is presented as a consequence of danger, with whichany state management system, business and investment come into collision. The critical technologies which are very important for the RA economic development are also analyzed in the article.

Keywords: political risk, assessment of risk, unfavourable consequences, crisis technologies, rate of risk.